

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՔՈԶԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Արդյունավետության գնահատման արմատական հարցերից մեկը արտադրության հիմնական ռեսուրսներն ընդգրկող համալիր ցուցանիշների օգտագործման հիմնավորումն է։ Այդ առթիվ նշենք, որ մասնակի ցուցանիշները թույլ են տալիս հասարակական արտադրության արդյունավետության իջեցման կամ բարձրացման մասին դատել միայն այն դեպքում, եթե դրանք փոփոխվում են մեկ ուղղությամբ։ Մյուս դեպքերում հնարավոր են սխալ եզրակացություններ, ինչպես դա հանդիպում է տնտեսագիտական որոշ հետազոտություններում։ Օրինակ, Ա. Պ. Կոշկարևը և Ս. Ս. Չուբենկոն, հենվելով ֆոնդահատույցի նվազեցման և կենդանի աշխատանքի արտադրողականության աճի տեմպերի դանդաղեցման փաստերի վրա, այն եզրակացության են հանգում, թե ռվերշին տարիներս հասարակական արտադրության արդյունավետությունը նկատելիորեն նվազել է»¹։

Իրոք, մեր էկոնոմիկայի զարգացման առանձին ժամանակաշրջաններում մենք մշտապես հանդիպում ենք ֆոնդահատույցի նվազման և կենդանի աշխատանքի արտադրողականության բարձրացման դեպքերի և, հետևաբար, մշտապես կանգնած ենք երկրորդանքի առաջ՝ հասարակական արտադրության արդյունավետությունը նվազել է, թե՞ բարձրացել։ Այլ կերպ ասած, անհրաժեշտություն է զգացվում որոշել այն հարցի պատասխանը, թե ֆոնդահատույցի նվազումը փոխհատուցվել է արդյոք կենդանի աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ, թե ոչ։

Այդ դժվարությունները հանգեցնում են հասարակական արտադրության արդյունավետությունը համալիր կերպով որոշելու անհրաժեշտությանը։

Ընդհանուր արդյունավետությունը ծախսումների առանձին տեսակների արդյունավետության բաժանելը հիմնվում է անալիզի և սինթեզի դիալեկտիկական մեթոդի վրա։ Տնտեսական պրոցեսի ամեն մի անալիզ պետք է ավարտվի սինթեզով, ինչը և հանգեցնում է հասարակական արտադրության առանձին ծախսումների արդյունավետությունը համադրելու, կշռադատելու անհրաժեշտությանը։ Պետք է ասել, որ ծախսումների առանձին տեսակների արդյունավետության համադրման և կշռադատման փորձերը խիստ պայմանական են և դժվարությամբ են ենթարկվում տնտեսական մեկնաբանության։ Այդ առթիվ կան բազմաթիվ առաջարկություններ։ Որոշ ցուցանիշների

¹ А. П. Кошкарёв, С. С. Чубенко, Хозяйственная реформа и внутризаводской хозрасчет. М., 1967, էջ 122.

բազմակողմանի քննադատությունը տվել է Վ. Մ. Ռուտզայզերը²։ Նա քննադատում է «փոխհատուցվելիության ժամկետը», Ա. Կացի առաջարկած մարդ-ֆոնդ-արտադրանք ֆորմուլան, ԳԴՀ-ի մի քանի տնտեսագետների առաջարկությունները և Ի. Շիլինի առաջարկած «արտադրության ժողովրդա-տնտեսական արդյունավետության» ցուցանիշը։ Սակայն Ի. Շիլինի տնտեսկետի³ քննադատման առթիվ անհրաժեշտ է ավելացնել, որ հեղինակը անիրավացիորեն փորձում է առարկայացած և կենդանի աշխատանքը (գործադրվող ծախսումներ) միավորել սպառվող ծախսերի օգնությամբ և այդ պատճառով, քաղաքատնտեսական հիմնավորման տնտեսկետից, ստանում է հասարակական արտադրության ծախսումների և արդյունքների մի անհասկանալի խառնուրդ։

Կենդանի և անցյալ աշխատանքի առադրման մյուս տնտեսկետի օրինաչափ քննադատությունը, ինչպես ֆոնդահատուցի և կենդանի աշխատանքի արտադրողականության ինդեքսներից քառակուսի արմատների վերաբազմապատկումը, տվել է Ն. Ա. Շոկինը⁴։ Արդյունավետության ցուցանիշների առանձին տնտեսկետ քննադատում է Պ. Ֆ. Պոչկինը⁵։ Նրա կարծիքով, որի հետ մենք ևս համամիտ ենք, քննադատվող ցուցանիշների մեթոդոլոգիական արատն այն է, որ գրանցում կենդանի աշխատանքի ծախսումները արտացոլվում են աշխատավարձի ֆոնդի օգնությամբ⁶։ Այդ դեպքում մոռացության է տրվում, որ աշխատավարձի ֆոնդը չի արտացոլում արտադրության մեջ կենդանի աշխատանքի բոլոր ծախսումները, այլ արտացոլում է միայն վարձատրված աշխատանքը։ Եթե կապիտալիզմի օրոք, ելնելով արտադրության կապիտալիստական ձևի նպատակներից, աշխատանքի ծախսումները կարելի է հաշվի առնել ըստ այդ աշխատանքի վճարման ծախսումների, ապա սոցիալիզմի օրոք աշխատավարձի ֆոնդի հիմնավորված բարձրացումը լիովին համապատասխանում է սոցիալիզմի հիմնական օրենքին և դրանով իսկ հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման կարևոր հատկանիշ է հանդիսանում։

Վերջին հաշվով, հասարակական արտադրության արդյունավետությունը համազոր է հասարակական աշխատանքի արտադրողականությանը, քանի որ «ընդհանրապես աշխատանքի արտադրողականությունը = արտադրանքի մաքսիմումին աշխատանքի մինիմումի դեպքում...»⁷։ Սակայն հասարակական աշխատանքի արտադրողականության հասկացությունը խիստ բազմակողմանի է և կոնկրետացում է պահանջում արտադրության տնտեսական արդյունավետության ցուցանիշներում։ Կ. Մարքսը արտադրողականության բարձրացում էր համարում արտադրանքի մեկ միավորի վրա կենդանի և անցյալ աշխատանքի ծախսման նվազումը⁸։ Դա կարելի է համարել հասարակական

² В. М. Рутгайзер, Региональные особенности общественного воспроизводства, М., 1972, էջ 27—34։

³ П. А. Малышев, И. Г. Шилин, Критерий эффективности социалистического воспроизводства, М., 1973, էջ 289։

⁴ «Известия АН СССР, серия экономическая», 1977, № 2, էջ 11։

⁵ «Эффективность общественного производства», под ред. Б. П. Плышевского, М., 1976, էջ 79։

⁶ Այդ տնտեսկետը պաշտպանում են Ն. Շոկինը և Ա. Պոչկինը (տե՛ս «Плановое хозяйство», 1977, № 3, էջ 77)։

⁷ «Архив Маркса и Энгельса», т. II (VII), 1933, էջ 125։

⁸ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 25, ч. I, էջ 286։

աշխատանքի արտադրողականությունը որոշելու սկզբունքային սխեմա և խնդիրը հենց այն է, թե ինչ ցուցանիշներով արտացոլել արտադրանքի մեկ միավորի վրա կենդանի և անցյալ աշխատանքի ծախսումների նվազումը:

Տնտեսագիտական գրականության մեջ նկատվում է աշխատանքի արտադրողականության որոշման երեք ուղղություն.

Առաջին ուղղությունը, ելնելով ճենդհանրապես աշխատանքի արտադրողականության մարքսիստական հասկացությունից, անհրաժեշտ է համարում հաշվի առնել նաև անցյալ աշխատանքը⁹ (Հասկանալի է, որ այս ուղղությունը վերջին հաշվով հանգում է ամբողջությամբ վերցրած արտադրության արդյունավետության գնահատմանը):

Երկրորդ ուղղությունը ժխտում է առաջինին, բերելով այն փաստարկը, որ անցյալ աշխատանքը արտացոլվում է արտադրության արդյունավետության մյուս ցուցանիշներում (ֆոնդահատույց, նյութատարություն, կապիտալատարություն և այլն)¹⁰: Բայց վերջին կոնցեպցիայի կողմնակիցները փակուղու առաջ են կանգնում հենց այն պատճառով, որ զգացվում է կենդանի և անցյալ աշխատանքի արդյունավետությունը համադրելու անհրաժեշտություն: Զե որ ծախսումների առանձին տեսակների արդյունավետության չափումը ոչ թե ինչ-որ ինքնանպատակ բան է, այլ նպատակ ունի համալիր կերպով չափելու արտադրության արդյունավետությունը, հաշվի առնելով նաև անցյալ աշխատանքի ծախսումները, ընդ որում ոչ թե առանձին վերցրած, այլ կենդանի աշխատանքի ծախսումների կապակցությամբ:

Երրորդ ուղղությունը պնդում է, որ աշխատանքի արտադրողականության գնահատման ժամանակ անհրաժեշտ է ցուցանիշների սխեմա: Ընդ որում այս կոնցեպցիայի կողմնակիցները գտնում են, որ աշխատանքի արտադրողականության չափումը միայն ըստ կենդանի աշխատանքի ծախսումների նույնպես հնարավոր է, քանի որ այն ունի ինքնուրույն նշանակություն, որը կենդանի աշխատանքի էֆեկտիվությունը բնորոշում է «մաքուր տեսքով»¹¹:

Հասկանալի է, որ վերջին ուղղությունը առաջին և երկրորդ ուղղությունների համեմատ մի առաջընթաց քայլ է կատարում, քանի որ հասարակական աշխատանքի արտադրողականության գնահատման ժամանակ այստեղ առկա է սխեմային մոտեցումը: «Ընդհանրապես աշխատանքի արտադրողականությունը» բնորոշելու համար Ռ. Գավրիլովն առաջարկում է օգտագործել ցուցանիշների այն բոլոր տեսակները, որոնց համարիչում (կամ հայտարարում) հանդիպում է «աշխատանքը», իսկ արդյունավետության մնացած մասնավոր ցուցանիշները, որոնք «մաքուր» տեսքով բնորոշում են անցյալ աշխատանքի արդյունավետությունը, մի կողմ են մնում: Սակայն հասարակական արտադրության զարգացմանը զուգընթաց գնալով էլ ավելի կարևոր դեր է ստանում անցյալ աշխատանքը՝ որպես արտադրության միջոց: Հաշվի առնելով դա և հասարակական աշխատանքի արտադրողականության մարքսիստա-

⁹ См. С. Г. Струмилин, Проблемы экономики труда, М., 1957, էջ 663: Այդ կոնցեպցիան պաշտպանում են նաև Վ. Ս. Նեմչինովը, Ա. Ս. Կուրյավցևը, Ա. Ա. Իվանենկոն, Լ. Ա. Կոստինը և ուրիշներ:

¹⁰ Այդ կոնցեպցիան պաշտպանում են Ե. Ի. Կապուտինը, Դ. Ն. Կարպուխինը, Յա. Ն. Կվաշան, Ե. Վ. Կասիմովսկին, Ե. Լ. Մանեխը, Ս. Գ. Սոբոլը և ուրիշներ:

¹¹ Р. Гаврилов, Измерение производительности труда в промышленности СССР («Вопросы экономики», 1976, № 3, էջ 133—143):

կան ըմբռնումը, մենք կարող ենք արտադրության արդյունքի հարաբերությունը անցյալ աշխատանքի առանձին տեսակներին համարել հասարակական աշխատանքի արտադրողականության ցուցանիշ, ճիշտ նույն ձևով, ինչպես և կենդանի աշխատանքի արտադրողականությունը: Այսպիսի մոտեցումը հասարակական աշխատանքի արտադրողականության բնորոշմանը համապատասխանում է այդ հարցի մարքսիստական ըմբռնմանը և ավելի լրիվ է արտացոլում մեր էկոնոմիկայի խնդիրները զարգացած սոցիալիզմի էտապում:

ՍՄԿԿ XXIV և XXV համագումարներում հասարակական աշխատանքի արտադրողականության աճը նույնպես բնորոշվեց որպես բոլոր միագումար ծախսումների տնտեսում: ՍՄԿԿ XXIV համագումարին տված հաշվետու զեկուցման մեջ Լ. Ի. Բրեժնևը մատնանշեց, որ «պրոբլեմի էությունն այն է, որ աշխատանքային նյութական և ֆինանսական ծախսումների յուրաքանչյուր միավորի հաշվով էապես մեծացվի արտադրության և ազգային եկամտի ծավալը: Դա էլ վերջին հաշվով հանրային աշխատանքի արտադրողականության բարձրացումն է»¹²:

Արդյունավետության ցուցանիշների սխտեմ ասելով, մենք հասկանում ենք ցուցանիշների փոխադարձաբար կապված, սուբորդինացված միագումարը, որոնք չեն փոխարինում միմյանց և յուրաքանչյուրը արտացոլում է արտադրության արդյունավետության տարբեր կողմերը, իսկ դրանք բոլորը միասին վերցրած տալիս են արդյունավետության լրիվ պատկերը: Այսպիսով անհրաժեշտություն է զգացվում, նախ, կարգի բերել ցուցանիշների սխտեմն ըստ դրանց կարևորության (ըստ ծախսումների և արդյունքների ընդգրկման լրիվության) և երկրորդ, ի հայտ բերել ցուցանիշների փոխադարձ կապերն ու փոխադարձ պայմանավորվածությունը, առանց որի «սխտեմ» տերմինը կորցնում է իր իմաստը:

Ցուցանիշների սխտեմում առանձնահատուկ նշանակություն ունի արդյունավետության համալիր (ընդհանրացնող) ցուցանիշի որոշումը, որն արտացոլում է միասին վերցրած անցյալ և կենդանի աշխատանքի ծախսումները:

Արդյունավետության համալիր ցուցանիշների մշակման համար հարկավոր է կոնկրետացնել հասարակական արտադրության «ծախսումներ» և «արդյունք» հասկացությունները:

Նախ, արտադրության արդյունքը պետք է հաշվի առնվի ըստ բնամթերքի (ըստ ֆիզիկական ծավալի) որպես այն սպառողական արժեքների որոշակի քանակ, որոնք համապատասխանում են հասարակական պահանջարկների կառուցվածքին: «Ինչպիսին էլ որ լինի հարստության հասարակական ձևը, — գրել է Կ. Մարքսը, — սպառողական արժեքները մշտապես կազմում են նրա բովանդակությունը...»¹³: Արտադրանքի ֆիզիկական ծավալի դինամիկայի որոշումը կատարվում է համադրելի գների օգնությամբ (այդ մեթոդը առայժմ միակն է):

Երկրորդ, տարեկան արտադրանքի ֆիզիկական ծավալը որոշելիս մենք պետք է խուսափենք կրկնակի հաշվարկից: Այդ պահանջին համապատասխանում է զուտ և վերջնական արտադրանքը:

¹² «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», Երևան, 1971, էջ 72—73:

¹³ «Архив Маркса и Энгельса», т. II (VII), М., 1933, էջ 125:

Արտադրության ծախսումների վերաբերյալ կարելի է ասել հետևյալը.

Նախ, հասարակական արտադրության ծախսումների մեջ պետք է հաշվի առնվի կենդանի աշխատանքի ամբողջ ծավալը՝ կամ ըստ նյութական արտադրության աշխատողների քանակի, կամ ժամերով հաշված ըստ փաստացի ծախսված ժամանակի (հասկանալի է, որ այստեղ դեռևս չլուծված է մենում աշխատանքի ռեզուկցիայի պրոբլեմը):

Երկրորդ, արտադրության հասարակական ծախսումների մեջ պետք է հաշվի առնվի աշխատանքի միջոցների գործադրվող (այլ ոչ թե սպառվող) ամբողջ ծավալը, քանի որ սպառողական արժեքների գոյացման գործում հիմնական միջոցները մասնակցում են ամբողջությամբ, նրանց այն օգտակար հատկանիշների օգտագործման միջոցով, որոնք առաջանում են կոնկրետ աշխատանքի օգտակար հատկանիշների հետևանքով¹⁴:

Երրորդ, հասարակական ծախսումները որոշելիս աշխատանքի առարկաները չպետք է հաշվի առնվեն, քանի որ դրանց մեջ մարմնացած են նյութական արտադրության այն ճյուղերի աշխատողների կենդանի աշխատանքի ծախսումները, որոնցում ձեռք են բերվում և ստեղծվում են աշխատանքի առարկաները, որոնք մենք հաշվի ենք առնում արդեն կենդանի և անցյալ աշխատանքի ընդհանուր ծախսումների մեջ:

Մի քանի խոսք բոլորի կողմից ընդունված մասնակի ցուցանիշների վերաբերյալ:

Ծախսումների առանձին տեսակները, հանդիսանալով հասարակական արտադրության գործոնների սիստեմի մի մասը, ապահովում են հասարակական արտադրության հանրագումար արդյունավետությունը, իսկ քանի որ հասարակական արտադրության արդյունավետություն կարելի է համարել «ընդհանրապես աշխատանքի արտադրողականությունը», ապա ծախսումների առանձին տեսակների արդյունավետությունը որոշելիս հարկավոր է հենել այն բանից, թե ինչ ազդեցություն ունեն ծախսումների առանձին տեսակները հասարակական աշխատանքի արտադրողականության վրա: Այդ անհրաժեշտությունը հետևում է 4. Մարքսի այն դրույթից, որ «Աշխատանքի արտադրողական ուժը որոշվում է բազմազան հանգամանքներով, ի միջի այլոց բանվորի հմտության միջին աստիճանով, գիտության զարգացման մակարդակով և նրա տեխնիկական կիրառման աստիճանով, արտադրական պրոցեսի հասարակական համակցությամբ, արտադրության միջոցների չափերով և արդյունավետությամբ, բնական պայմաններով»¹⁵: Այսինքն, հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացումը, որը արտադրության բոլոր գործոնների գործողության հանրագումար արդյունքն է, ծառայում է որպես արտադրական ռեսուրսի յուրաքանչյուր տեսակի օգտագործման արդյունավետությունը գնահատելու միակ չափանիշ: «Հիմնական արտադրական ֆոնդերի հատուցման յուրաքանչյուր ցուցանիշ պետք է արտացոլում ստանա հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացման մեջ, որպես ժողովրդի նյութական բարեկեցության մակարդակի անընդհատ բարձրացման պայման»¹⁶: Սակայն հեղինակները, ինչպես և շատ ուրիշ տնտեսա-

¹⁴ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 23, էջ 622.

¹⁵ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 23, էջ 48.

¹⁶ А. Г. Казаченок, М. Н. Новиков, А. Э. Ярмолинская, Экономический анализ использования основных производственных фондов, Минск, 1971, էջ 21.

գետներ, որպես հիմնական արտադրական ֆոնդերի արդյունավետության հիմնական ցուցանիշ ընդունում են ֆոնդահատույցի ցուցանիշը, չփորձելով այն կապել հասարակական արտադրության արդյունավետության հետ: Ֆոնդահատույցի ցուցանիշը հազիվ թե բավարարի վերը շարադրված սկզբունքներին: Ֆոնդահատույցի ցուցանիշը, որպես լրիվ արդյունքի հարաբերություն հիմնական արտադրական ֆոնդերի նկատմամբ, ցույց չի տալիս, թե արտադրանքի ֆիզիկական ծավալի մեծացման որ մասն է հանդիսանում լրացուցիչ հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման բուն հետևանքը: Ֆոնդահատույցի ցուցանիշը առանձին վերցրած չի կարող խոսել հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործման արդյունավետության և առավել ևս հասարակական արտադրության արդյունավետության մասին:

Հասարակական արտադրության ծախսումների մյուս կարևոր բաղադրամասը կենդանի աշխատանքի ծախսումներն են: Սակայն կենդանի աշխատանքի արտադրողականության ցուցանիշը տալիս է խեղաթյուրված պատկերացում, թե իբր արտադրվող արտադրանքի ամբողջ ֆիզիկական ծավալը հետևանք է միայն կենդանի աշխատանքի ծախսումների:

Նշված ցուցանիշները, արտացոլելով հասարակական արտադրության ծախսումների արդյունավետության առանձին կողմերը, միայն միասին վերցրած կամ ինչ-որ կերպ կշռադատված ձևով կարող են տալ հասարակական արտադրության արդյունավետության լրիվ պատկերը: Սկզբունքորեն արդյունավետության այդ մասնավոր ցուցանիշների կշռադատումը (համադրումը) հնարավոր է հետևյալ կերպ: Հասարակական արտադրության արդյունավետությունը արտահայտվում է հետևյալ ֆորմուլայով.

$$E = \frac{ԱԵ}{ԱՇ + Ն \cdot Ֆ} \quad (1)$$

որտեղ ԱԵ-ն՝ արտադրության արդյունքն է,

ԱՇ-ն՝ նյութական արտադրության աշխատողների քանակը,

Ֆ-ն՝ նյութական արտադրության հիմնական ֆոնդերը,

Ն-ն՝ հիմնական ֆոնդերը կենդանի աշխատանքի վերածելու գործակիցը:

(Նրա մեծության և տնտեսական բովանդակության մասին՝ ստորև):

Նշված ֆորմուլայի (1) հիման վրա կարելի է ապացուցել հետևյալը. որպեսզի արտադրության արդյունավետությունն ըստ նշված չափանիշի բարձրանա, անհրաժեշտ և բավարար է, որ ֆոնդահատույցի բացարձակ մեծությունների ու աճի տեմպերի և աշխատանքի արտադրողականության միջև պահպանվի հետևյալ պայմանը.

$$\lambda > \frac{ԱԱ_0 \cdot \lambda_1}{\Phi \lambda_0 \left(1 - \frac{1}{\mu}\right) + ԱԱ_0 \cdot \lambda_0} \quad (2)$$

որտեղ ԱԱ₀-ն, Ֆλ₀-ն համապատասխանաբար աշխատանքի արտադրողականությունը և ֆոնդահատույցն են բազիսային տարում,

μ, λ-ն՝ դրանց աճի տեմպերը հաշվետու տարում,

λ₁-ը, λ₀-ն՝ կենդանի աշխատանքով հիմնական ֆոնդերի փոխարինելիության նորմաները հաշվետու և բազիսային տարում:

Ֆոնդահատույցի և աշխատանքի արտադրողականության միջև վերջին պայմանի պահպանումը ժողովրդատնտեսական մակարդակով ամբողջությամբ վերցրած հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման կարևոր երաշխիք է:

Հասարակական աշխատանքի արտադրողականության վրա առանձին ցուցանիշների փոփոխման ազդեցությունը որոշելու համար ընդունենք հետևյալ նշանակումները.

$$ԱԱ = X$$

$$ՖՀ = Y$$

$$Ն = Z$$

Այդ դեպքում արդյունավետության ընդհանրական ցուցանիշը որոշ կերպով փոփոխումներից հետո հետևյալ տեսքը կստանա.

$$I = \frac{XY}{Y + ZX} \quad (3)$$

Ֆունկցիան (3) դիֆերենցելով, կստանանք՝

$$\Delta I \approx \frac{\partial I}{\partial X} \Delta X + \frac{\partial I}{\partial Y} \Delta Y + \frac{\partial I}{\partial Z} \Delta Z \quad (4)$$

Որոշենք հասարակական արտադրության արդյունավետության աճի տեմպերը մասնավոր ցուցանիշների մեծացման հաշվին (T_i)

$$T_{I_1} = \frac{\partial I}{\partial X} \cdot \frac{\Delta X}{I_0} \quad (5)$$

$$T_{I_2} = \frac{\partial I}{\partial Y} \cdot \frac{\Delta Y}{I_0} \quad (6)$$

$$T_{I_3} = \frac{\partial I}{\partial Z} \cdot \frac{\Delta Z}{I_0} \quad (7)$$

(5)–(7) ֆորմուլաները արտացոլում են մասնավոր ցուցանիշների (կենդանի աշխատանքի արտադրողականության և ֆոնդահատույցի) փոխադարձ կապը հասարակական արտադրության արդյունավետության ընդհանրացնող ցուցանիշի հետ:

Նյութատարության ցուցանիշի վերաբերմամբ նկատենք հետևյալը. թեպետ մենք ընդունում ենք, որ տարեկան հասարակական ծախսումների մեջ չպետք է հաշվի առնվի միջանկյալ արտադրանքը, բայց դա չի նշանակում, թե հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման համար նշանակություն չունի հումքի և նյութերի ծախսումների խնայողությունը: Հումքի և նյութերի որակի բարձրացումը անմիջական նշանակություն ունի վերջնական արդյունք ձեռքբերում արտադրության արդյունավետությունը բարձրացնելու գործում, իսկ դրանց խնայողությունը ազատում է միջանկյալ արտադրանք ձեռքբերում արտադրության ընդլայնման համար լրացուցիչ ռեսուրսներ (աշխատանքային և ֆինանսական) օգտագործելու անհրաժեշտությունից: Այսինքն նյութատարության նվազեցումը անմի-

ջականորեն նշանակում է ժողովրդական տնտեսության մեջ հիմնական միջոցների ու կենդանի աշխատանքի խնայողություն:

Նույնը ասենք, օգտագործելով մաթեմատիկայի լեզուն:

Հումքի և նյութերի պայմանական խնայողությունը ի հաշիվ նյութատարության կարելի է սահմանել այսպես.

$$U_{\Sigma} \cdot \frac{S_0}{U_{\Sigma_0}} - S_1,$$

որտեղ S_0 -ն, S_1 -ը միջանկյալ արտադրանքի ծախսումներն են համապատասխանաբար բազիսային և հաշվետու տարում:

Շնորհիվ նյութական ծախսումների պայմանական խնայողության, վերանում է լրացուցիչ հիմնական ֆոնդերի օգտագործման անհրաժեշտությունը, որոնք ըստ մեծության հավասար են՝

$$\frac{1}{\Phi_{\Sigma_0}} \left(U_{\Sigma} \cdot \frac{S_0}{U_{\Sigma_0}} - S_1 \right),$$

և կենդանի աշխատանքի օգտագործման անհրաժեշտությունը. հետևյալ շափով՝

$$\frac{1}{U_{\Sigma_0}} \left(U_{\Sigma} \cdot \frac{S_0}{U_{\Sigma_0}} - S_1 \right).$$

Անփոփոխ նյութատարության դեպքում հաշվետու տարում ֆոնդահատույցը հավասար կլինի

$$Y'_1 = \Phi'_{\Sigma_1} = \frac{Y_1 Y_0}{Y_0 + (\Sigma S_0 - \Sigma S_1) Y_1},$$

իսկ կենդանի աշխատանքի արտադրողականությունը՝

$$X'_1 = U_{\Sigma_1} = \frac{X_1 X_0}{X_0 + (\Sigma S_0 - \Sigma S_1) X_1},$$

որտեղ ΣS_0 -ն, ΣS_1 -ը նյութատարության մեծություններն են համապատասխանաբար բազիսային և հաշվետու տարիներում:

Այսինքն անփոփոխ նյութատարության դեպքում մենք կունենայինք

ֆոնդահատույցի նվազում $\frac{Y_1 - Y'_1}{Y_0}$ և կենդանի աշխատանքի արտադրողականության նվազում $\frac{X_1 - X'_1}{X_0}$ անգամ: Դա կհանգեցնի հասարակական արտադրության արդյունավետության նվազմանը (օգտագործելով (5)–(7) ֆորմուլաները) համապատասխանաբար $\frac{Y_1 - Y'_1}{Y_0} \cdot \frac{\partial \Phi}{\partial Y}$ և $\frac{X_1 - X'_1}{X_0} \cdot \frac{\partial \Phi}{\partial X}$ անգամ:

Այսպիսով, ի հաշիվ նյութատարության նվազման ապահովվում է հասարակական արտադրության արդյունավետության բարձրացում

$$\frac{Y_1 - Y'_1}{Y_0} \cdot \frac{\partial \Phi}{\partial Y} + \frac{X_1 - X'_1}{X_0} \cdot \frac{\partial \Phi}{\partial X}, \quad (8)$$

ի հաշիվ կենդանի աշխատանքի արտադրողականության բարձրացման

$$\frac{\partial Z}{\partial X} \cdot \frac{X_1 - X_0}{Z_0} \quad (9)$$

ի հաշիվ ֆոնդահատույցի բարձրացման

$$\frac{\partial Z}{\partial Y} \cdot \frac{Y'_1 - Y_0}{Z_0} \quad (10)$$

և ի հաշիվ փոխարինելիության նորմայի ավելացման

$$\frac{\partial Z}{\partial Z} \cdot \frac{\Delta Z}{Z_0} \quad (11)$$

անդամ:

Նկատենք, որ վերը ստացված փոխադարձ կապերը առաջին հայացքից բարդ են թվում, սակայն դրանք բոլորը վիճակագրական առանձին նյութ չեն պահանջում և հեշտությամբ կարող են հաշվվել: Իհարկե, դեռևս չլուծված է մնում կենդանի աշխատանքով հիմնական միջոցների փոխարինելիության նորմայի տնտեսական մեկնաբանության և քանակական դնահատման պրոբլեմը:

Կենդանի և անցյալ աշխատանքի համադրման կոնկրետ փորձեր կարելի է գտնել Կ. Մարքսի աշխատություններում¹⁷, որոնք և տալիս են այդ հարցի լուծման մեթոդոլոգիական բանալին:

Հաշվարկից հետևում է, որ անցյալ աշխատանքը կենդանի աշխատանքի վերածելիս հաշվի է առնվում աշխատանքի ոչ թե այն քանակը, որը ծախսվել է աշխատանքի միջոցների արտադրության վրա, այլ այն դրույթը, որ արդյունավետության քննարկման առնչությամբ ռեսուրսների բոլոր տեսակների ընդհանուր հատկանիշը դրանց ներգործությունն է էֆեկտի մեծության վրա, որն ստացվում է ի հաշիվ կոնկրետ ռեսուրսի մեկ միավորի կիրառման: Ուստի որպես ռեսուրսների առադրման հիմք հանդես է գալիս դրանց հատուցումը:

«Առադրման այդպիսի եղանակը ավելի ճիշտ է, քան կենդանի և առարկայացած աշխատանքի պարզ գումարումը, ...որը ենթադրում է հավասարություն ըստ կենդանի աշխատանքի մեջ մարդ-ժամի հատուցման առարկայացած աշխատանքի մեկ ժամին»: Այդպիսի մոտեցման ժամանակ «Այդ պայմանականությունը վերանում է, քանի որ ֆոնդերի աճում առարկայացած աշխատանքը արտահայտված է ըստ կենդանի աշխատանքի արդյունավետության համարժեք աշխատանքային միավորների մեջ»¹⁸:

Մեզ թվում է, որ այդ հարցի վերաբերյալ Պ. Պոլկինի կարծիքը համապատասխանում է անցյալ աշխատանքը կենդանի աշխատանքի վերածելու մարքսիստական ըմբռնմանը: Բայց մենք համաձայն չենք վերածման այն կոնկրետ մեթոդին, որը կիրառում է հեղինակը:

Առաջարկվող մեթոդի ամենամեծ թերությունն այն է, որ կենդանի աշխատանքի արտադրողականության ամբողջ աճը և ի հաշիվ վերջինիս ազգային

¹⁷ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IV, № 124—125.

¹⁸ «Эффективность общественного производства, критерии, методы расчета, показатели», М., 1976, № 84.

եկամտի տվելացումը դիտվում է որպես հիմնական արտադրական ֆոնդերի աճի հետևանք:

Հիմնական արտադրական ֆոնդերը և արտադրության ու աշխատանքի կազմակերպումը կատարելագործելու պրոցեսը սոցիալիստական վերարտադրության օրգանապես միասնական պրոցես է: Այդ պատճառով բացարձակացնել մեկը և անտեսել մյուսները, նշանակում է թույլ տալ մեթոդոլոգիական սխալ:

Արաադրական ֆունկցիաների մեթոդը հնարավորություն է տալիս այդ պրոբլեմը լուծելու (թեկուզ բուն մեթոդի թերություններից բխող որոշ վերապահումներով) ավելի պարզ և հիմնավորված կերպով, քան Պ. Ֆ. Պոլկինի առաջարկած մեթոդը:

Արտադրական ֆունկցիաների ընդհանուր տեսքը հետևյալն է.

$$ԱԵ = \Phi (ԱՇ, Ֆ)$$

Անցյալ աշխատանքը կենդանի աշխատանքի վերածելու համար արտադրական ֆունկցիալի հիման վրա որոշվում է աշխատանքի միջոցներով աշխատուժի փոխարինելիության նորման՝

$$\bar{\nu} = \frac{\partial ԱԵ}{\partial Ֆ} : \frac{\partial ԱԵ}{\partial ԱՇ}$$

և վերջիններս բաղմապատկում հիմնական արտադրական ֆոնդերին:

Վերջում նշենք, որ հասարակական արաադրության արդյունավետության դնահատման պրոբլեմները չեն կարող լրովլն բացահայտվել առանց հաշվի առնելու արտադրության արդյունավետության սոցիալական ասպեկտները. ինչպես նաև առանց հաշվի առնելու ամբողջ սոցիալիստական վերարտադրության արդյունավետությունը: Արդյունավետության ցուցանիշները սոցիալիստական արաադրության տեխնիկա-տնտեսական կազմի արաացությունն են, մինչդեռ վերարաադրության արդյունավետության ցուցանիշների մեջ պետք է արաացուվի նաև վերարաադրության մյուս ոլորտների, մասնավորապես շրջանառության ոլորտի տեսուրսների օգտագործումը: Այդ կապակցությամբ կարևոր նշանակություն է սաանում նաև ոչ արտադրական ոլորտի արդյունավետության դնահատումը: Միայն այդպիսի ընդլայնված մոտեցումը կարող է նպաստել դնահատման պրոբլեմի համալիր լուծմանը, ինչպես նաև սոցիալիստական էկոնոմիկայի արդյունավետության բարձրացմանը:

МЕТОДИЧЕСКИЕ ВОПРОСЫ ОЦЕНКИ ЭФФЕКТИВНОСТИ ОБЩЕСТВЕННОГО ПРОИЗВОДСТВА

КОЧАР МАНУКЯН

Резюме

В системе показателей эффективности общественного производства особое место занимают обобщающие (интегральные) показатели, функциональное значение которых составляет определение эффективности факторов производства в их взаимосвязи. В экономической литературе по

теории эффективности общественного производства часто не рассматриваются внутренние взаимосвязи показателей эффективности, в то время как без количественного выражения этих взаимосвязей невозможно оценить эффективность общественного производства хотя бы в общих чертах.

Проблема оценки эффективности глобальных экономических систем не ограничивается лишь сферой производства. На современном этапе в связи с увеличением непроизводственной сферы и других структурных сдвигов важное значение приобретает оценка эффективности сфер производства, обмена, распределения и потребления в качестве органически единого процесса — воспроизводства.